Գիրքը համացանցում է **տեղադրվել** Գրքամոլ Նախաձեռնության կողմից:

Բոլորի կողմից սիրված Գրքամոլ-ը սկսել է մի նախաձեռնություն, որի նպատակն է համացանցում էլեկտրոնային տարբերակով տեղադրել բոլոր այն գրքերը, որոնք սիրված են հայ ընթերցասերների կողմից և ցանկանում են դրանք ընթերցել նաև էլեկտրոնային տարբերակով: Ժամանակի ընթացքում մեր կողմից համացանցում կհայտնվեն բոլոր այն գրքերը, որոնք մինչ այս ինչ-ինչ պատճառներով ձեզ համար եղել են դժվար ձեռքբերելի:

Գրքամոլը, ունենալով իր ուրույն տեղը համացանցում, իր առջև նպատակ է դրել հասարակության մեջ բարձրացնել սերը դեպի ընթերցանությունը, առաջացնել հետաքրքրություն դեպի դասական և արդի գրականությանը, և կոտրել բոլոր այն կարծրատիպերը, թե այսօրվա հայ իրականության մեջ ընթերցողներ չկան:

Սիրելի՛ ընթերցողներ, սրանք մեր առաջին քայլերն են այս ասպարեզում, և մենք շատ ուրախ կլինենք, եթե կլինեն մարդիկ, ովքեր կցանկանան մեզ օգնել այս հանրօգուտ գործում: *Էլեկտրոնային գրքերի պատրաստման և մեր կայքում դրանք ներկայացնելու հարցում մենք չունենք որևէ շահ և չենք չհետապնդում որևէ եկամուտ*, բացի հայ և արտասահմանյան գրականությունը հայ ընթերցասերներին հասանելի դարձնելուց, և մենք բաց ենք բոլոր նվիրյալ և օգնել ցանկացող մարդկանց համար: Եթե դուք տանը ունեք լուսապատճենահանման սարքեր, և ուզում եք միանալ մեր կողմից ձեռնարկվող այս հանրօգուտ գործին, ապա գրեք Ձեր ցանկության մասին մեր էլէկտրոնային փոստարկղին՝ grqamol@gmail.com: Շնորհակալություն, որ հետևում եք մեզ: Ցանկանում ենք բոլորիդ հաճելի ընթերցանություն:

Գրքամոլ Նախաձեռնություն

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

ՎԻՍԼԱ ՍԵԴՐԱԿՅԱՆ

Հոգեբանի գրառումներից

= ՃԵՐՄԱԿ ՏԱՆԳՈ =

(Ռադիոբեմադրության (1973թ[1])., լրամշակված, արձակ տարբերակ)

«Բոլոր հասուն մարդկանց
թերություններն ապացույց են այն բանի,
որ հատկապես մանկական տարիքում
նրանց գիտակցության թթխմորը ճիշտ
միջավայրում չի հասունացել»

= ՀԵՂԻՆԱԿ =

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: *www.grqamol.am*, e-mail: *grqamol@gmail.com*

---

1. Արժանացել է տարվա լավագույն ռադիոբեմադրության և սցենարի մրցանակին: Ռեժիսոր՝ Մարգո Մուրադյան, խմբագիր՝ Մուշեղ Բաղդասարյան, դերակատարներ՝ Արթուր Ութմազյան, Տաթևիկ Ղափլանյան, Շաքե Թուխմանյան, Լևոն Թուխիկյան…

=Ա Ն Ո Ն Մ=

(Քանց պատումի նախերգանք)

***

Հիշում եմ, թե ինչպե՜ս էի փոքր ժամանակ անմիջապես դառնում անտրամադիր, երբ հեռուստացույցի ալիքները փոխելիս, աչքիս զարնում էին հայրիկ – մայրիկների սիրո ու գուրգուրանքի տեսարաններ: Երբ կադրը փոխվում էր, հեռուստացույցն անջատելով՝ արագ վազում ու մտնում էի բազմոցին նստած ու գուլպա գործող տատիկիս “քուչը” (թևատակին ծվարելը) և քիչ հետո, տխուր ձայնով նրան հարցնում.

-Տա՜տ… հայրիկն ու մայրիկն է՞լ են իրար շատ սիրում:

Տատիկս ակնոցների վերից ինձ ուշադիր զննելուց հետո, քիչ լռում և շարունակելով գործելը, հոգոցախառը պատասխանում էր.

-Իհարկե՛, բալի՛կս, բայց հիմա բոլորից շատ ձեզ են սիրում:

Ես շարունակում էի.

-Տա՜տ… մեզ հայրիկն է շատ սիրում, թե՞ մայրիկը:

-Երկուսն էլ հավասարաչափ, բալի՛կս, իսկ ինչու՞ ես հարցնում.

-Հե՜չ… հենց էնենց, տա՛տ ջան,- ասում էի ու նորից մտնում “քուչը”, անչափ ուզենալով հավատալ նրա ասածներին և դրանով ցրել հոգիս մշուշող ի՜նչ-ի՜նչ ամպեր…

-Տատի՛կ, իսկ ինչու՞ են նրանք հաճախ վիճում,- նորից հարցնում էի ես:

-Շատերն են վիճում, աղջի՛կս, ոչ մեկի տանն էլ ամեն օր հարսանիք չէ,-պատասխանում էր նա և իմ հերթական “ինչու”-ներին վերջ տալու համար, գլուխս շոյելով, նորից հոգոցախառը ասում.

-Կմեծանաս, շատ բաներ ինքդ կհասկանաս:

ԵՎ ԵՍ ՇՏԱՊՈՒՄ ԷԻ ՄԵԾԱՆԱԼ…

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

= Է Լ Ե Գ Ի Ա =

(Որպես սկիզբ)

Մինչ դպրոցն ավարտելս, անկախ ծնողներիս միջև ընթացող անընդհատ վեճերին, ես էլ, աշխարհի բոլոր երեխաների նման սիրում էի ամեն մի զիզի-պիզի բաների համար նրանց արևով երդվելը: Սակայն, թերևս, ի տարբերություն բոլոր լոկ "հոր" արևով երդվողների, ես՝ ծնողներիս անունը միշտ միասին էի տալիս ("հորս-մորս արև") և դրանով՝ ոչ այնքան երդումս առավել համոզիչ դարձնելու, որքան՝ ինքս ինձ ներշնչելու, որ ես էլ՝ իրենց եմ հավասարաչափ սիրում, ինչպես, ըստ տատիկիս՝ նրանք մեզ… Գուցե կար նաև նրանց միշտ միասին ու հա՛շտ տեսնելու իմ երազանքը՝…չգիտեմ…

Անցա՛ն տարիներ: Երբ տարիքիս հետ սկսեցի նաև որոշ բաներ խորքով հասկանալ, ավա՛ղ, ինքնաբերաբար, դադարեցրի իմ այդ՝ "զույգ արևներով" երդվելու մանկական անուշ սովորությունը: Չքացել էր նախկին ակնածանքը: Ոչ միայն համոզվել էի, որ ծնողներիս փոխհարաբերություններում սիրո նշույլ անգամ չկար, այլև նրանց միջև ԻՍՊԱՌ բացակայում էր նաև ՀԱՐԳԱՆՔԸ միմյանց հանդեպ, ինչն արդեն ԱՏԵԼՈՒԹՅԱՆ նախադուռն էր …

Երբեմն, նույնիսկ ծնվում էր այդ գաղջ մթնոլորտից, ուր ուզում է լիներ, հեռու փախչելու ցանկությունը … Սակայն ամեն անգամ փրկում էր տատս: Նման մի շիկացած առիթով, նա ինձ հետ դուրս եկավ պարզապես քայլելու և խոսքի մեջ ցիտեց անտիկ աշխարհի գիգանտներից Ցիցերոնի թևավոր միտքը, որն այդուհետ դարձավ խռովահույզ պահերիս կրակմարիչը: Ահա այն. <ԴԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆ ՈՉ ԹԵ ԻՆՔՆԻՆ, ԱՅԼ ԱՎԵԼԻ ՇԱՏ ՄԵՐ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ>…

Երբ տուն էինք վերադառնում, իմաստուն տատիկս ինձ հասցրեց "վերջին հարվածը"՝ ասելով. <Չվիրավորվես, բալի՛կս, սակայն հի՛շիր, որ "Խորտակվող նավից՝ առաջինը փախչում են առնետները">…ամաչեցի ու որոշեցի ՏՈԿԱԼ… Ժամանակ անցավ…

Մեկ հորս էի մեղադրում, մեկ մորս, մերթ մեկին խղճում, մերթ մյուսին: Հայրս ինձ երբեմն, նույնիսկ անզուսպ ու դաժան մարդ էր թվում: Ականջիս հասնող անգամ հայհոյախոս բառերից զգացվում էր, որ նա ինչ-որ մի մեծ մեղքի համար մորս չի ներում, մայր, որի ոտքերն էլ ամպոտ չէին: Նա չար ու ամբարիշտ կին էր, անգամ որոշակի շեղվածությամբ, երբ հատկապես հիստերիկ

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

համոզվածությամբ ճչում էր, որ հայրս իրեն “գիշեր-ցերեկ դավաճանում է”: Դատապարտելին հատկապես այն էր, որ նա, այսպես ասած, “հորիցս ետ չմնալու համար”, հակառակ նրա արգելքներին, ցուցադրաբար, շարունակում էր իր մտերմիկ հարաբերությունները մեր շենքում բնակվող Ինգա և Էդիկ Գամարյան կոչեցյալների այլասերված ընտանիքի հետ՝ չգիտակցելով, որ դրանով ստվերում է նաև մեր, իր մանկամարդ աղջիկների պատիվը:

Այո՛, սեր, ընտանիք, բարոյականություն, պատիվ, պատասխանատվություն և հազար ու մի այլ հարցերում, ԲԱՑԱՐՁԱԿ տարբեր էին հորս ու մորս չափանիշները… Նույնիսկ ռիսկ եմ անում ասելու՝ ԳԵՆԵՏԻԿՈՐԵՆ, որն ինձ ապշեցնում էր, թե էդ դեպքում ի՞նչ հիմքով են նրանք ամուսնացել և ինչպե՞ս են նույն հարկի տակ միմյանց հանդուրժում: Բարոյական չէր հատկապես մորս տակտիկան…”ոչ թե հեռանալ, այլ մնալ և վրեժ լուծել” (?) …Ես հիմա էլ եմ մեծ անբարոյականություն համարում նաև այն, որ մայրս, դեմ չլինելով հանդերձ, որ մենք սովորենք հորս ղեկավարած դպրոցում, միաժամանակ, փորձում էր ինձ ու քրոջս անընդհատ տրամադրել մեր ուսուցչի դեմ, որն անկախ ամեն ինչից (նույնիսկ իր նկատմամբ, նաև մեր՝ սառը վերաբերմունքից), մեր հիվանդ եղբոր տառապալից ուսում-բուժմանը զուգընթաց, ակադեմիկական և գեղագիտական բարձր մակարդակով էր իրականացնում մեր կրթության գործը, ինչպիսին էր բնականաբար նաև մեր լուսեղեն կրթօջախը, որն էլ ավարտեցինք՝ միանգամայն արժանի լինելով “ոսկե մեդալի”, որն, իհարկե՛, անհնար կլիներ, եթե նա, էն վերոհիշյալ ՀԻՄՔԵՐՈՎ բաժանվեր իմ մորից…

Այո՛, էդ հետո՛, շա՛տ հետո, ես ու քույրս հասկացանք, որ դա գիտակցված ինքնազոհողություն էր (ԲԱՑԱՌԻԿ) և ես՝ արդեն գիտությունների թեկնածուս (նրա վճռորոշ չարխափանման միջամտություններով), գետինն էի մտնում՝ վերհիշելով, թե ինչպես տարիներ առաջ, նրա հետ վիճելիս, ես ինձ թույլ տվեցի, իր զավակների համար նրա ողջ արածը գնահատել լոկ որպես ՀԱՅՐԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ի ապացույց, որ նաև իր մեղքով, իմ մանկական գիտակցության թթխմորը ճիշտ միջավայրում չէր հասունացել…

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

= Ա Ռ Ա Ջ Ի Ն Ս Ա Յ Թ Ա Ք Ո Ւ Մ Ը =

(Ի մաս)

***

Ծնողներիս դեռ երեկվա հերթական սանձարձակ վեճերից խռով ներաշխարհս առավել ալեկոծվեց, երբ զեկուցողը՝ ինչ-ինչ գենետիկ նոր գիտափորձերի և դրանց հոգեբանական ընդհանրացումների հիման վրա, շատերիս “պլոշտ” (չտեսի) զարմանք պատճառեց (հատկապես մեզ՝ առաջին կուրսեցիներիս), պնդելով, որ երեխաների արտաքին գեղեցկությունը, զգալիորեն պայմանավորված է նաև նրանով, թե իրենց արարման պահին (սեռական ողջ ակտի ընթացքում) նրանց ծնողները, ինչպիսի ՓՈԽՀԱՃՈՒՅՔՈՎ են տրվում միմյանց և ՓՈԽԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆ պատճառում մեկ-մեկու… <Խոնջանքն ու զոհունակության ժպիտն են ապագա մանկան գեղեցկության ու առողջության նախապայմանները>,-ասաց նա, շարունակելով.<Եվ, ցավոք, հակառակը, երբ ինչ-ինչ ՎԱՆՈՂ պատճառներով կամ խախտվում, կամ թուլանում է զույգերի ԼԻԲԻԴՈ ՁԳՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ փոխկանչը>…

Գրատախտակին նույնպես գրված այդ թեզը, նոթատետրիս մեջ անցկացնելիս, հանկարծ մտաբերեցի, թե ինչպես էին իմ ծննդյան օրվա առիթով, մեր տուն այցելած որոշ աննրբանկատ տարեցներ, ինձ գրկել-գուրգուրելուց հետո, միաբերան ասում. <Աննայի գեղեցկությունն՝ ուրիշ է… իսկը՝ հրեշտակ>…Ուրե՞մն…

Նիստի ավարտից անմիջապես հետո տուն գնալու անասելի ցանկություն ունեցա: Գալուն պես ինձ իսկույն զցեցի լողասենյակ և սկսեցի հայելու մեջ ոչ միայն զննել, այլև, կարծես՝ մանրազննին պեղել դեմքս.. Հետո այնտեղից դուրս թռնելով՝ գրադարակից վերցրի մեր ընտանեկան ալբոմը և սկսեցի “քրքրել” հատկապես ինձանից հետո ծնված քրոջս նկարները…ու…սոսկացի, տարբերություններ իրոք կային… սոսկացի …ուրե՞մն… ուրեմն՝ ծնողներիցս որևէ մեկը (կամ երկուսը միասին) խախտել էր (էին) այսօրվա քննարկված թեզի է՛ն կանոնը՝ ՄԱՐԴԱՐԱՐՈՒՄԸ ՎԵՐԱԾԵԼՈՎ լոկ ԲՆԱԶԴԱՅԻՆ ՍԵՌԱԿԱՆ ԱԿՏԻ…գուցե հենց այդ հոգեմաշ վեճերի բերումո՞վ…

Շուկայից վերադարձած տատիկս, նախ զարմացավ, որ արդեն տանն եմ և հետո դեմքիս ուշադիր նայելով՝ տագնապած հարցրեց .

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

-Լա՞ց ես եղել, ինչու՞:

Մի բան բստրեցի, սակայն չհավատաց ու երբ զգացի, որ ճաշը սեղանին դնելիս էլ, շարունակում էր քննախույզ հետևել շարժումներիս, որոշեցի անհարկի լարվածություն չստեղծել և մեկից հարցրի.

-Տա՛տ, ինչպե՞ս են ամուսնացել ծնողներս:

Ձայնիս մեջ արտասվոր երանգներ զգալով (տատիկս նույնպես հոգեբան-փորձագետ էր), նա ստուգողական տոնով ասաց.

-Դեռ ԲՈՒՀ-ը չավարտած՝ արդեն ընտրությո՞ւն:

Բացատրեցի, որ ոչ այդ իմաստով ու ցույց տալով գրառումս, խոստովանեցի նաև շուտ տուն գալուս ու լացիս պատճառները: Լուռ լսելուց հետո վերցրեց գրառումս ու երբ այն կարդալուց հետո սկսեց նաև, ձեռի հետ, թերթել սեղանին դրված նկարների ալբոմը, զգացի, որ մտորումների մեջ է… Երբ դեմքի տագնապն աստիճանաբար փոխվեց մտահոգ լրջության, հասկացա, որ ներքուստ ինչ-որ վճռի է հանգել, թերևս համոզվելով, որ ես արդեն, իր ասածի պես, էնքան եմ մեծացել, որ ժամանակն է, որքան էլ այն ցավոտ լինի, հանուն իմ ճիշտ կողմնորոշումների, վեր բարձրացնել ծնողներիս ամուսնության ինչ-ինչ փաստերի վրա քաշված քողը, որն իրենից բացի ուրիշ ոչ ոք չէր կարող անել:

Ու երբ իր ամեն ինչով խարիզմատիկ ու իմաստուն տատիկս (բարեկիրթ ու համակրելի արտաքին, խաղաղեցնող ձայնի տոն, բնատուր թատերական պաուզաներ ու խոսքին հարմոնիկ ժեստեր, ճիշտ տեղին բերվող խորիմաստ համեմատություններ… և այլն) քիչ անց բազմոցի վրա զբաղեցրեց իր ավանդական տեղը և “աղաթի” կարգով ձեռքն առավ շյուղերը, զգացի, որ ուզում է խոսքի անցնել, ու երբ նաև հին կարոտի կանչող հայացք գցեց վրաս, ես իսկույն նույն մանկական մղումով, ծվարեցի նրա թևի տակ՝ դառնալով համակ ուշադրություն…

<Լսի՛ր, աղջիկս, ու եթե հարմար գտնես, կարող ես նաև տեղ-տեղ գրառել ասելիքս, որը, քե՛զ, ապագա մասնագետիդ, կարծում եմ, կարող է և պիտանի լինել՝ որպես “անձի հոգետրավմատիկ անոմալ երևույթներ”: Այո՛, այն ո՛չ հեքիաթ է, ո՛չ էլ սարքովի դեդեկտիվ, սակայն, ցավոք, նույնիսկ՝ տեղ-տեղ՝ դրանցից վեր է, որպես հազվադեպ, սակայն <որքան անհավանական, նույնքան իրական ճակատագրական “պատահմունքներ”…

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

-Ես քեզ ոչինչ չեմ պարտադրում, աղջի՛կս, սակայն խնդրում եմ հաշվի առնես, որ ասելիքս ծայրից-ծայր լինելու է ՄՈՐ ԽՈՍՔ, որը չի կարող ՍՈՒԲՅԵԿՏԻՎ չլինել, երբ այն վերաբերում է իր որդուն և խնդրում եմ, դրա մեջ, առավել ևս՝ որպես ապագա հոգեբանի, վատ բան չտեսնես: Մայր և որդի չեն կարող միմյանց ԱՆԱՉԱՌ սիրել (իմա “օբյեկտիվ”), ինչպես տխմարաբար պնդում են մարքս-լենինյան “փուչ” գաղափարախոսները սերն ընդհանրապես ՍՈՒԲՅԵԿՏԻՎ հասկացողություն է: Սակայն ՉՀԻՄՆԱՎՈՐՎՈՂ սուբյեկտիվությունը (ԱՉԱՌՈՒ լինելը) նույնպես մեկ այլ ԿԱՄԱՀԱՃՈՒԹՅՈՒՆ է…Այնպես որ եթե դժվար կլինի “կամ-կամը”, խորհուրդս է՝ եղիր ՉԵՋՈՔ ՈՒ ԱՐԴԱՐԱՄԻՏ…հիշելով՝ <Պլատոնը բարեկամս է, բայց ճշմարտությունը ավելի թանկ է> իմաստախոսությունը…

<Հեռու չգնանք, բալի՛կս: Այդ առումով բերեմ հորդ ԲԱՑԱՌԻԿ խառնվածքին ու մորդ ցածրանմուշությանը բնորոշ մի ցավալի օրինակ:

Եթե հայրդ, որպես կոմունիստ, իր անձնական կյանքում ևս առաջնորդվեր այդ տխմար “օբյեկտիվ ռեալականությամբ”, ապա բոլոր հիմքերն ուներ մորիցդ բաժանվելու հենց էն ժամանակ, երբ դու դեռ նոր էիր սաղմնավորվել նրա փորում, և նրանք դեռ չէին ամուսնացել.. Այո՛, քեզանով հղիանալուց հետո նոր՝ մայրդ հորդ իրազեկել էր, որ ինքն արդեն մեկ անգամ ամուսնացած, բաժանված և անգամ աբորտով պտղին սպանած կին է…

Երկարատև տառապալից մտորումներից և անքուն գիշերներից հետո, չիջնելով իր ՍՈՒԲՅԵԿՏԻՎ խղճի բարձունքից և չուզենալով քեզ ևս դարձնել դանակի զոհ և դեմ գնալով բոլորիս կարծիքին, հայրդ ամուսնացավ ԱՆԱՁՆԻՎ մորդ հետ, ավա՜ղ, թույլ տալով ՀԱՆՑԱՆՔԻՑ ԷԼ ԾԱՆՐ ՍԽԱԼ՝ իրեն ՑԿՅԱՆՍ դնելով մի ԽԱԲԵԲԱՅԻ զոհասեղանին, որի վրայից էլ մենք բոլորս պարբերաբար լսում եք Ձեզ վեճ թվացող այդ սխալի ցավալի զոռոցները…

Մի ամբողջ ոդիսական է նաև ինչպես մինչամուսնական, այնպես էլ դրանից առաջ հորդ կյանքում դարձյալ ՍԵՎ ՃԱԿԱՏԱԳՐԻ դեր խաղացած երկու ՃԵՐՄԱԿ ՏԱՆԳՈՆԵՐԻ ցնցող պատմությունը, որոնց քիչ անց կիրազեկվես, երբ խոսքիս ընդհատումներով կընթերցես այդ մասին հորդ կատարած հրաշալի, ՆՈՎԵԼԱՇՈՒՆՉ գրառումները, մտածելով նույնիսկ՝ դրանք ապագայում հրատարակելու մասին մի խորհրդավոր վերնագրով՝ <ԱՂՋԻԿՆԵ՛Ր, ՃԻՇՏ ՊԱՐԵՔ “ՃԵՐՄԱԿ ՏԱՆԳՈՆ”, ՃԵՐՄԱԿԸ ՇՈՒՏ Է ԹԱՌԱՄՈՒՄ…

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

Դրանք գրելիս հայրդ կարծես առաջնորդվել է Ֆրանց Կաֆկայի այն ասույթով, որ Գրիչը ոչ թե գործիք է գրողի ձեռքում, այլ նրա օրգանը…

***

<Հայրդ սիրում էր ինձ հետ կիսվել՝ հատկապես իր բուհական միջավայրի հրապուրանքների շուրջ: Զգում էի, որ լուրջ ոչինչ չկար: Ինչպես արագ ոգևորվում, այդպես էլ արագ հիասթափվում էր և մինչև 5-րդ կուրս նրա մոտ որևէ մեկի նկատմամբ լուրջ զգացմունքներ չառաջացան: Սակայն Լենինգրադից վերադառնալուց հետո, որտեղ նա անցկացրեց իր նեղ մասնագիտական պրակտիկան (“Արևելքի պատմություն” ակադեմիկոս Հովսեփ Օրբելու մոտ) հայտարարեց, որ Էրմիտաժում ծանոթացել ու հավանել է մեկին, որը շուտով գալու է Երևան…

Նրա հետագա հաց ու կապից, հեռախոսային զանգերից, կենսուրախ տրամադրությունից, զգացվում էր, որ իր ապագա հարսնացուն ոչ միայն արդեն Երևանում էր, այլև բուռն հանդիպումների միջով էր անցնում նրանց ժամանակը: Միայն զարմանալին այն էր, որ հայրդ ոչ իր ապագա մտադրությունների մասին էր խոսք բացում և ոչ էլ, այսպես ասած, “լայաղ” անում նրան՝ մեզ հետ ծանոթացնելու: Մեր տանը կար մի թափանցիկ անհամբերություն և երկար ձգվող սպասողական վիճակ, որն ավարտվեց նրանով, որ հայրդ սկսեց հաճախ մռայլվել, գիշերները անհանգիստ քնել և երբեմն էլ, ինչը նրան բնորոշ չէր, ուշ ժամերին տուն գալ, էն էլ՝ խմած …

Ես ու պապիկդ տագնապեցինք՝ հասկանալով, որ այդ ամենն արդեն լոկ հրապուրանքից հիասթափվելու նշաններ չէին… Նրա մեջ զգացվում էր խաբված լինելու և արժանապավության վիրավորվածության դեպրեսիվ վիճակ…

Մեր մտավախություններն իրականություն դարձան, երբ գործուղման պատրվակի տակ նա հանկարծ մեկնեց Մոսկվա և շուրջ մեկ ամիս անց, այնտեղից վերադարձավ ծանր վիրահատություն տարած, որն հետագա բարդություններ տալով՝ չծառայեց իր նպատակին>:

Տատիս աչքերից արցունքներ գլորվեցին, ձայնը դողաց, ու նա մի քանի րոպե խոսքի դադար տվեց: Ես էլ էի մի տեսակ սառել ու կուչ եկել նրա կողքին…վիրահատությո՛ւն… կարծես մշուշի միջից ինձ մոտեցող հորս պատկերը նորից չքացավ… Վիրահատությո՞ւն ու այն էլ՝ ծա՞նր: Իսկ ինչու՞ ես՝ նրա առաջնեկը, արդեն 20 տարեկան, ոչինչ չգիտեի այդ մասին:

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

Մի՞թե հատկապես մորս հրահրիչ պերմանենտ վեճերը, նրա մեջ սպանել էին նաև մեր կողմից ճիշտ հասկացվելու հավատը:

Մի՞թե նա լրջորեն էր համոզված այն բանում (ինչպես մի անգամ կես-լուրջ, կես-կատակ ասաց դասի ժամանակ), որ <տղաները մայրապաշտ են ողջ կյանքում, իսկ աղջիկները՝ մայրահպատակ՝ մինչ ամուսնությունը>:

…-Հետո՞,- տատիս լռությունը խախտեցի ես: Նա հոգոց հանելով շարունակեց.<Ի՞նչ, “հետո”, բալա՛, “հետոն” էն էր, որ որոշ ժամանակ անց մեզ պարզ դարձավ նրա այդ տխմար քայլի դրդապատճառը…Գիտես, որ հայրդ մի թեթև կաղում է: Դա հին պատմություն է: Նա փոքր տարիքում վայր ընկավ հեծանիվից, և բժիշկները վնասված ոտքը սխալ բուժեցին…

Եվ ահա մի երեկոյի ժամանակ է՛ն Լենինգրադից եկածի հետ (որի անունը նա այդպես էլ չասաց մեզ) նա պարահրապարակ է մտնում և անուրջներով տարված փոքր-ինչ թուլացնում է “ոտքային զգոնությունը” ու նկատում, որ իրենց պարին ակնապիշ հետևող այդ աղջկա որոշ լկտի ընկերուհիներ կապկում են իր պարելաձևը և փոթկոցներ արձակում: Դրանից խոցված՝ նա իսկույն դադարեցնում է պարը և առանց “դամային” իր տեղն ուղեկցելու՝ իջնում ծխարան… Քիչ անց այնտեղի ռադիոյից լսվում է, որ դահլիճում հայտարարվում է եռահրավեր “ճերմակ տանգո”, երբ ինչպես գիտես, հրավիրում են աղջիկները… և …և…, աղջի՛կս, լավ կլինի, որ շարունակությունը ինքդ կարդաս հորդ հուշատետրում, որն հիմա կտամ քեզ… վերցրու՛ և բաց արա 36-րդ էջը…>

ՀԱՅՐՍ-<…Չէ՛, չէ՛… կգա՛… հիմա կգա՛… կգա՛ հենց ծխարանից հրավիրելու նրան, որին նման մի երեկոյի ժամանակ դեռ Լենինգրադում հավաստիացնում էր (երբ ես մերժեցի նրա նմանատիպ մի “ճերմակ տանգոյի” հրավերը), որ անձամբ իր համար այդպիսի գրեթե աննկատելի “ոտքային թերությունը” չի կարող խոչընդոտ լինել, եթե ինքն առավել կարևոր պոստուլատների առկայության դեպքում սիրի մեկին: … <Սերը հո մարաթոնյան վազք չի՞>… սրախոսեց նա, որի հարուցած ժպիտով էլ պարահրապարակ մտանք… իսկ հիմա՞…չէ՛, չէ՛, կգա՛, կգա՛, որ ներողություն խնդրի իր անտակտ ընկերուհիների փոխարեն, և իրենք դուրս կգան այս դավադիր դահլիճից՝ մոռանալով թե՛ նման անուղեղ քածերին, և թե՛ նրանց հասցրած վիրավորանքը…սակայն, Աստվա՛ծ իմ, … առաջին հրավերն արդե՛ն ավարտվեց, սկսվեց երկրո՛րդ “ճերմակ տանգոն” (“Իմ սիրելի խեղճ մայրը” հրաշալի ֆիլմից)… սակայն դարձյալ զո՛ւր սպասումներ… ինչ-որ կանխազգացումով՝ ինքս վեր ելա դահլիճ… և հեռվից

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

նկատեցի նրա շատ գեղեցիկ ծնկներին գրեթե քսված խոնարհումով կանգնած մեկին: Ես մեջքի կողմից աննկատ մոտենալով, լսեցի նաև այդ փորձված որձի բառակույտի ձայնը… <Հաշիվն արդեն երկու-զրո է, հօգուտ Ձեզ, ուստի, թույլ տվեք, որ երրորդ պարը, անկախ “գույնից”՝ ես հրավիրեմ և խնդրում եմ արագ, քանի դեռ Ձեր օրինական կավալերը, իր սրընթաց քայլերով դահլիճ չի մտել>… Երբ հենց էդ “ՍՐԸՆԹԱՑ” ոտքի հարվածը լփռոտ բերանին ընդունած էդ անասունը փռվեց գետնին, ես, առավել ցուցադրաբար կաղալով՝ դուրս եկա դահլիճից>…

Երբ տատս, հենց այդ տեղում իր ձեռքով փակեց հուշատետրը, զգացի, որ ուզում է առժամանակ մնամ կարդացածիս տպավորության տակ…

Իրոք, հատկապես հոգեբանական արձակի առումով՝ դա մի շա՜տ կյանքոտ նմուշ էր…

Տատս շարունակեց.<Այդ դրվագը, աղջի՛կս, “Հուշատետրում” շարունակություն չունի: Միայն ենթադրել կարելի է, թե ինչ դժոխային զգացումներով հայրդ թողած կլինի այդ դահլիճը, ինչպիսի վիրավորվածությամբ իր համեմատ լոկ վերջույթային առավելություն ունեցող այդ մարդուկներից, որ որոշում է անհապաղ դիմել վիրահատական դանակի “հրաշքին”, որի արդյունքն արդեն գիտես>: <… Հետո՜… հետո գլորվեցին տարիները իմ ու պապիկիդ սպիտակող մազերի միջով… որպես արդյունք՝ իրենց որդու ընդհանրապես կյանքի և մարդկանց հանդեպ ունեցած հավատի կորստի:

Հիշի՛ր, ընկե՛ր ապագա հոգեբան, նման տրավմատիկ հոգեկան ցնցումները, հատկապես հորդ պես նրբազգաց ու դյուրախոցելի մարդկանց կյանքում (իմա՝ ըստ իրենց “արատավոր”) երբեք անհետևանք չեն անցնում: Նա էլ նախկին կենսուրախը չէր: Դարձել էր ինքնամփոփ ու դյուրագրգիռ: Անտարբեր էր հատկապես իր արտաքինի նկատմամբ: Չնայած իր լայն շրջապատին ու իր հանդեպ տածվող համընդհանուր սիրուն ու հարգանքին, նա հատկապես խուսափում էր տարիքակից աղջիկներից՝ դառնալով անգամ կնատյաց: Նրա մահճակալի հպասեղանիկին բավականին երկար ժամանակ պառկած մնաց “Աբու-Լալան”: Նույնիսկ հիշում եմ, թե ինչ գույնի մատիտներով, ինչ տողատակեր էր ընդգծում, ընդ որում՝ նշելով նաև ամիս, ամսաթիվ ու ժամ… Չգիտեմ ինչու՞, բայց միայն կարմիր գույնով էր ընդգծվում հատկապես այսպիսի տողեր… <Ատում եմ սերը, մահի պես անգութ, հավիտյան այրող խոցող գաղտնաբար>… <Ատում եմ այդ քաղցր թույնը, որով արբողը ստրուկ է դառնում և կամ բռնակալ>… <Ատում եմ կնոջ երախտամոռ կեղծիքը հոգու ու անձը նսեմ, որն իմ կամքից

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

դուրս՝ պոռնիկ է միայն> … <Ատում եմ կնոջ տարերքը կրքի… խորամանկ, խաբող ու քո գրկի մեջ ուրիշին գրկող> … և այլն … կարծեմ՝ Մաքսին Գորկին է ասել, որ <ընդգծումները՝ թե՛ անանց սիրո վերապրման և թե՛ խաբված զգացմունքների վկայարան են>:

<Իսկ հիմա եկ մտովի պատկերացնենք, որ ես ու դու էլ ենք ներկա արդեն ծնողներիդ <առաջին ու վերջին>, իսկ հորդ կյանքում ՎԵՐՋԱՊԵՍ “ՎԵՐՋԻՆ” ՉԱՐՈՐԱԿ “Սպիտակ տանգոյի” բախտորոշ պտույտներին:

Վստահ եմ, որ արդեն քեզ էլ է քաջ հայտնի, որ մարդուն ժամանակ է պետք համոզվելու՝ իր երջանիկ կամ դժբախտ լինել-չլինելու մեջ, որի դեպքում, ավա՜ղ, երբեմն վճռորոշ են դառնում ճակատագրով տնօրինվող պատահականությունները: Այդպիսին դարձավ նաև, ցավոք, հորդ ու մորդ առաջին հանդիպման սկիզբը, որի մեջ ակամայից խառն էր նաև իմ մատը…

Դարձյալ այդ անիծված “Ճերմակ տանգոյի” հնչյունների տակ մի գեղեցկադեմ կնոջ հաջողվում է, հորդ մերժումները հաղթահարելով, նրան ի վերջո քաշել պարի մեջ…>

Այստեղ տատս, կարծում եմ, դարձյալ նպատակային դադար տվեց և իջավ հայաթ՝ հողամասը ջրող ռետինե խողովակի դիրքը փոխելու (մենք ապրում էինք կայարանամերձ Անդրֆեդերացիայի փողոցի N 117 սեփական տանը)՝ ինձ հնարավորություն տալով այսպես ասած՝ մարսելու լսածս:

Երբ ետ եկավ ու նորից նստեց իր տեղը, ես անհամբեր հարցրի.<Հետո՞>… Ի զարմանս ինձ՝ արդեն կոշտ տոնով ու շուտասելուկի արագությամբ նա ասաց (հետո զգացի, որ մորը ծանր էր <վերհիշել որդու դժբախտության նախերգանքը>).

<-Հետո այն, որ շատ կարճ ժամանակ անց այդ կինը դարձավ քո ապագա մայրը, ինչի մասին ակնարկեցի խոսքիս սկզբում…>

Աչքերը թացացան, հետո խաղաղվելով և շյուղերը մի կողմ դնելով՝ նորից ձեռքն առավ կողքին դրված հորս հուշատետրը և 62-րդ էջը բացելով, արդեն մեղմ ձայնով ասաց.<Ավելի լավ կլինի ինքդ կարդաս, աղջի՛կս, մինչ ես թեյը տաքացնեմ…>

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

= ԵՐԿՐՈՐԴ, ԱՐԴԵՆ ՍԵՎԱԳՈՒՅՆԸ =

(II մաս)

***

ՀԱՅՐՍ.<Ես անտարբեր կանգնել էի պատուհանի մոտ և անհամբեր սպասում էի հավաքույթի ավարտին, որպեսզի մորս հանձնարարությամբ այնտեղից կայարան ուղեկցեմ Թբիլիսիից մեզ հյուր եկած հորաքրոջս աղջկան՝ Էթերիին, որի ընկերուհիներից մեկի տանն էլ կազմակերպվել էր այդ "բարի ճանապարհումը">:

Հանկարծ մեկը, ձայնապնակը փոխելով (պատեֆոնի), զիլ ազդարարեց՝ "Ճերմակ տանգո" և սեթևեթ քայլերով ուղղվեց դեպի ինձ՝ այդ սենյակում ոչ ու բարով գտնվող միակ տղամարդուս... սարսափեցի... մոտեցավ ... սարսափեցի... գեղեցիկ էր ու ՆՐԱՆ նման... սարսափեցի... ինչ-որ բան ասաց... չլսեցի..."Ճերմակ տանգո՞" ո՛չ, ո՛չ, ո՛չ,- հնչեց ներսումս... Երբ բացեցի ինձանից անկախ մի պահ ձեռքերով փակված աչքերս... նա, զարմացած, ժխիտը դեմքին, դեռ կանգնած էր դիմացս ու ձեռքն ինձ պարզած՝ սպասում էր...

-Եկե՛ք պարենք, ես Ձեզ հրավիրում եմ,- ասաց ռուսերեն:

Ես գլխով բացասական շարժում արեցի:

-Ես ինձ վատ կզգամ, եթե մերժեք,-ու սեթևեթ համառությամբ բռնեց ձեռքս...

-Ցանկություն չունեմ,-չորեցի ես՝ փորձելով ձեռքս ազատել:

Սակայն բաց չթողեց՝ ասելով.

-Ձեր ձեռքը դողում է, վա՞տ եք զգում, գուցե ջու՞ր...

Նորից նայեցի դեմքին. Իրոք, գեղեցիկ էր ու իրոք, ՆՐԱՆ նման, սակայն ոնց որ՝ սրա աչքերը առավել խաղարկու էին: Դուրս չեկավ... Հիշեցի՞...

-Ես կաղ եմ, հասկացա՞ր, Я калека- համարյա գոռալով ու նաև ռուսերեն ասացի նրան ու կոպտորեն ձեռքս ձեռքից դուրս քաշելով հեռացա կողքի... վայրկյաններ եմ հաշվում...մեկ, երկու, երեք... Հիմա ուսերը թոթվելով կհեռանա՝ կամ կարեկցանքի, կամ արհամարհանքի ժպիտը դեմքին... Կհեռանա՞... իսկ ես վերջապես դուրս կթռնեմ էս անտեր "Ճերմակ տանգոյի դարանից": Էթերիի հե՞րն էլ անիծած, ոնց ուզում է՝ թող գնա... սակայն... սակայն զգացի, որ

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

դեռ կանգնած է և մի տեսակ այլ կերպ ժպտալով՝ նորից մոտ գալով ու նորից ձեռքս բռնելով ու հիրավի կիսամերկ ուսերը թոթվելով, էս անգամ վրացահայ ակցենտով ասաց.

-Ի՞նչ անենք… (<հո մարաթոնյան վազք չի՞>), այո՞, որպես նրա խոսքի շարունակություն ասացի ես՝ վերհիշելով ճակատագրով կրկնվող Է՛ն “ճերմակ տանգոյի” ժամանակ ՆՐԱ ասածը…

-<Տեմ բոլեյե> ասելով ու հաստատ ակնարկիցս ոչինչ չհասկանալով՝նա ավելի կիպ մոտեցավ ինձ և նույնիսկ շոյեց ձեռքս… հաճելիորեն բուրեց օծանելիքը…

<Կլիմա էր>… ինչպես նրա՛նը… Աստվա՛ծ իմ… Է՛ս ի՞նչ ծուղակ է… Ձեռքս նորից ետ քաշելով, հենվեցի պատուհանագոգին ու երևի պահից դրդված՝ նրան ոտից գլուխ չափելով, սկսեցի կիսաձայն իմ արևին իբրև վանող տողեր ասմունքել “Աբու-Լալայից”… <Օ՛հ, կնոջ մարմին, պագշոտ, օձեղեն, դիվական անոթ ոճիրների չար… Դու, որ մսեղեն դառը հաճույքով արևը հոգու դարձնում ես խավար…> … սպասածիս հակառակ՝ աստիճանաբար հիացմունքի փոխվող ժպիտը դեմքին՝ նա նորից մոտ եկավ և նորից ռուսերեն ասաց.

-Ցավոք, ես գրական հայերենին վատ եմ տիրապետում, ինչպես բոլոր հավլաբարցիները, բայց Ձեր այդ կիսաձայն ասմունքը՝ հաճույքով լսեցի: Շատ առնական ու գերող ձայն ունեք:

Երբ ինչ-որ շարժումով փորձեցի շրջանցել նրա բուրող մարմինը ու հանկարծ … (կարծում եմ՝ ոչ պատահաբար)… ձեռքս քսվեց նրա արդեն հևացող կրծքին, անմիջապես միմյանց աչքերի մեջ նայելով (դա բնատուր ռեֆլեքս է), զգացինք, որ ինչ-որ լիբիդո լիցքեր անցան մեր մարմիններով և կպան ճիշտ նշանակետերին… և ես, որձի մի հին կարոտով, նրա մեջքը ամուր գրկելով՝ մղվեցի պարելու>…

Գրառումն անավարտ էր, ու ես հուշատետրը փակելով, տեղը դրեցի… Ահա, թե ով էր <կարճ ժամանակ անց դարձել իմ մայրը>…

Կիսափակ աչքերով ու բավական երկար մտովի փորձեցի պատկերացնել ծնողներիս համատեղ անցած ճամփան և վերհիշեցի Վարդգես Պետրոսյանի ստեղծագործություններին նվիրված մեր դպրոցական երեկոյին՝ հայրիկիս կատարած համեմատությունը. <Ճանապարհին իմանալն ու այն անցնելը տարբեր, ԲՈԼՈՐՈՎԻՆ տարբեր բաներ են>: Թե ծնողներիցս որ մեկը որ դեպքում էր սխալվել, դժվար էր հասկանալ:

… Երբ վեր կացանք տատիկիս թեյադրած սեղանից և նորից տեղափոխվեցինք բազմոցին, զրույցը վերսկսեցի ես.

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

-Տա՛տ, բացի մեկ-երկու հարցից, որոնք, կներես, դեռ քեզ տալու եմ, լաածիս չափով կարծես ամեն ինչ հասկանալի է, իհարկե՛, ըմբռնողաբար… մարսելը՝ հետո: Համաձայն եմ քեզ հետ, որ ծնողներս թե՛ մտավոր, և թե՛ սոցիալական առումներով եղել են ու թերևս մնում են, այսպես ասած, տարբեր քաշային կատեգորիաներում: Ու նման ամուսնություններն, իրոք, ունենում են հազար ու մի անկանխատեսելի նեգատիվ հետևանքներ, սակայն կներես, տա՛տ ջան, որ կոպիտ անցում պետք է կատարեմ… Գլուխը քարը, որ նրանց անձնական կյանքը չի ստացվել… <քո գլուխը քարը, ուրիշի (դեռ չասեմ ծնողի) դժբախտության վրա չեն չարախնդում>,-հանկարծ ինձ “շրմփացրեց” տատս ու ես ամոթից, երևի նաև տանից դուրս կգայի, եթե հրամայական շեշտով չասեր՝ <շարունակի՛>…

Ես ներողություն խնդրելով ու թաց աչքերով՝ այդուհանդերձ, շարունակեցի.

-Տա՛տ, անկեղծ ասա՝ այս ամենի մեջ ի՞նչ մեղք ունեն երեխաները, որոնք ամեն օր եռեփվում են իրենց ծնողների նույնիսկ գռեհիկ վեճերի քուրայում… չե՞ս գտնում, որ նման դեպքերում այնուամենայնիվ, հատկապես՝ հանուն երեխաների, բաժանվելը ճիշտ է…

-Գտնում եմ,- զուսպ անբավարարվածությամբ ասաց տատս, շարունակելով,- բայց մի մոռացիր, որ Աստծո կողմից մարդուն տրված “միանգամյա օգտագործման կյանքը” (հորդ դիպուկ բնորոշումն է) իր կապիտալն է, և այն ոնց կուզի, կծախսի (ցավոք, ընդհուպ՝ ինքնասպանություն): Բացի դրանից, օրենքն էլ է թույլ տալիս բաժանությունը… Սակայն կան բաներ, աղջի՛կս, որոնք քո այսպիսի էգոիզմից և չոր օրենքներից շա՛տ բարձր են…

<Նախ, ինչու՞ եք միայն դուք, լավ բառ գտար՝ “եռեփվում”, ի՞նչ է մենք՝ ես, պապիկդ, խեղճ սկեսուրս, որի հետ մայրդ միշտ բռի գոռոցով է խոսում, հորաքույրերդ՝ մարդ չե՞նք, մենք չե՞նք տառապում, չհասկանալով՝ մեր ո՞ր մեղքի դիմաց …սակայն… հանուն ձեզ՝ մենք մեր տանից (դու էլ կներես կոպիտ բառիս համար)՝ ձեր ընտանիքը դուրս չենք շպրտում, անգամ չսպասելով ծնողներիդ բաժանությանը: Մեր տոհմական ու գենետիկ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ թույլ չի տալիս գնալու նման միանգամայն հիմնավոր, սակայն ինքնին՝ հրեշավոր քայլի, որի արժեքը, ցավոք, դու չես հասկանում, ինչպես մայրդ>:

Ես նորից ծվարեցի տատիս թևի տակ ու Աստվա՛ծ իմ, չզգացի նախկին բուրող ջերմությունը… պարզապես տաք էր… հոգու ու մարմնի ինչպիսի՛ հարմոնիա… երևի էդ պահին ես լոկ օտար մարմին էի նրա համար… Հա՞, տա՛տ… թե՞ թվաց…

Տատս շարունակեց՝ նույն զուսպ անբավարարավածությամբ.

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

<-Ձենդ տաք տեղից է գալիս… ԱՆՁՆՈՒՐԱՑ հա՛յր, պատասխանատու ու հոգատար պապի՛կ ու տատի՛կ, ձեր ամեն մի “հա ու չէի” պատրաստ հորաքույրե՛ր, ձեզ իր Սասնո <ձագուկների> պես սիրող Խանում տատի՛կ…Հորդ արդար ձեռքերով պատրաստված սեփական տո՛ւն, սեփական ավտոմեքենա՛, մրգաստան այգի՛, շրջագայությունն՛ե՛ր, ամենամյա ծովափնյա ամառային հանգիստ ու բուժու՛մ, “Արտեկ” ճամբա՛ր, անթերի կրթությու՛ն, ոսկե մեդա՛լ, ԲՈՒ՛Հ, էլիտար շրջապա՛տ, շքեղ հագ ու կա՛պ, կուշտ ստամո՛քս, ամրակուռ հուսալի հայրական թիկունք… շարունակե՞մ…

<Չասե՞մ՝ էլ ի՞նչ էր պետք հավլաբարցի մորդ՝ երջանիկ լինելու համար, երբ այս ամենին գումարած, նա այս օջախին է պարտական նաև թե՛ բարձրագույն կրթություն ստանալու, և թե՛ հինգ տարի քո ու քրոջդ հոգսը մեր վրա թողնելու առումով՝ չհաշված, որ շուրջ մեկ տարի, այս տան մեջ ապրեց նաև նրա եղբայրը, որին հայրդ ադրբեջանցիների լծից փրկելով (Խանլար) տեղափոխել տվեց Երևան… շարունակե՞մ, թե՞ այս ամենի հիմքով իրավունք ունեմ ասելու, առանց ներողություն խնդրելու, որ հիրավի՝ “խոզի գլուխը խալիչին չի կանգնում”>…

Ես ինքնաբերաբար տատիս թևի տակից դուրս եկա: Վիրավորական էր: Եվ մորս խղճացի: Տատս դեռ զայրացած շարունակեց.

-Հապա մի պահ աչքերդ փակիր ու պատկերացրու այն, ինչ կպատմեմ մորդ կենսագրությունից: Ես կօգնեմ, քանզի նա երբևէ դա Ձեզ չի պատմի… Ավանդական հայկական օջախին խորթ հավլաբարյան բարքեր, նույն հայաթում ապրող բաժանված ծնողներ, ոչ թե լոկ վեճեր, այլ անգամ ամենօրյա արյունալի բախումներ, միլիցիա, անկիրթ մթնոլորտ և ի վերջո այդ արատավոր միջավայրում մեծացող երեխաների՝ պատահական մարդկանց հետ դժբախտ ամուսնությունների շարան…

<Դե՛, ձեռքդ խղճիդ դնելով, ասա՛, կունենայի՞ք դու ու քույրդ այն ամենը, ինչն ի տարբերություն մորդ, ունեք ներկայումս, կամ առանց հորդ տիտանական ջանքերի կբուժվե՞ր երբևէ մորդ իսկ հանցավոր մեղքով հաշմված եղբայրդ… թե՞՝ հերթով կարժանանայիք մորդ ԱՌԱՋԻՆ ամուսնական ճակատագրին, ինչի համար, անկեղծ ասած՝ նրան խղճում եմ… (նման թունավոր միջավայրում նրա գիտակցության թթխմորը ևս, իհարկե՛, ճիշտ չէր հասունանա…)…կրկնում եմ՝ ԿՈՒԶԵՆԱՅԻ՞Ք: Եթե հայրդ իր բնատուր Աստվածային խղճին ու բարիությանը դեմ գնալով՝ վերոհիշյալ վարքագծային ցանկացած մեղանչման դիմաց՝ մորդ շպրտած լիներ փողոց…

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

<Այնպես որ, աղջի՛կս, էդ մենք կարող ենք դժգոհել հորիցդ, որ այդ քայլին չգնալով՝ մեզ թողեց քո էդ հնարած "եռեփվող" վիճակի մեջ: Ինչ վերաբերվում է Ձեզ, մասնավորապես քեզ ու քրոջդ, ապա դուք որևէ հիմք չունեք ըստ ամենայնի, չգնահատելու Ձեր հոր խաղացած Մեծ դերը ձեր կյանքում, որքան էլ ձեր մայրը տխմարաբար ճիգեր գործադրի նրան ձեր աչքում նսեմացնելու: Գոնե հիմա, ընկեր ապագա հոգեբա՛ն, համոզվիր, որ մորդ մեջ պաթալոգիկ չար նախանձ կա ու ՅԱԾՐԱՆՄՈՒՇԻ վախ,որ ձեր հոգում հանկարծ, ի վնաս իրենի, չգերակշռի ձեր հոր հանդեպ Ձեր օրավուր աճող սերն ու համակրանքը… թե չէ ի հայտ կգա, որ բացի ձեզ իր ԱՆԻԾՎԱԾ ԱՐԳԱՆԴՈՒՄ (ապացույցը ստորև հիշատակվող "տեղեկանքում"), ինը ամիս կրելուց՝ ձեր հանդեպ ուրիշ այլ "վաստակ" չունի, եթե այդ Աստվածատուրությունը, իհարկե՛, կարելի է այսպես անվանել:

<Եվս մի խնդրանք-պահանջ… իմ ու պապիկիդ կտակում, բացի ձեզ հասնող նյութական հատկացումներից, անձամբ քեզ (որպես առաջնեկի) հասցեագրված կլինի նաև առայսօր... գաղտնի պահվող մի հրեշավոր բժշկական տեղեկանք, որը դու իրավունք կունենաս բացելու միայն մորդ մահից հետո, ի խուսափումն նրա անկանխատեսելի դրսևորումների[1])… Այնժամ արդեն բացարձակ կհամոզվես, թե ուրիշ ինչով է հայրդ ՖԵՆՈՄԵՆ, իսկ ես ինչու այս ամենը քեզ պատմելիս այդքան ԱՆՈՂՈՔ գտնվեցի: Սահմռկել մնացել էի. Իբրև այս բոլորը քիչ էր, հիմա էլ՝ բժշկական տեղեկա՞նք… կդիմանայի՞… Վերջին ճիգերը գործադրելով՝ վերջին հարցը տվեցի տատիկիս.

---

1) Այդ տեղեկանքի մասին մանրամասը հաջորդ "փաստապատումում", որը ինչ-որ չափով, կարծես "Ճերմակ տանգոյի" շարունակությունն է:

-Տա՛տ, կներես, ևս մի հարց ու վերջ: Հիմարաբար քեզ շատ փոթորկեցի: Դու էլ, իրոք, անողոքաբար՝ ինձ չխնայեցիր, անգամ տեղ-տեղ մոռանալով, որ քո "զոհասեղանին" իմ մայրն է և որ նրան այդպիսին է դարձրել իր ՆԱԽԱՄՈՒՄՆԱԿԱՆ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ՝ իր ցածրանմուշ ծնողների մեղքով…

Այո՛, տա՛տ, համոզվեցի, որ եթե իմ հայրն էլ բաժանվեր իմ մորից, ինչպես նրա հայրը իր մորից, մենք էլ, հաստատ, կընկնեինք նրա օրը… Ուստի, որքան էլ երախտապարտ լինեմ, հատկապես հորս ու նաև բոլորիդ, (առավել ևս քո այս ԱՊԱՔԻՆԱՐ զրույցին),

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

այնուամենայնիվ, մորս ՉԽՂՃԱԼ՝ չեմ կարող… Պարզապես նա ՏԵՍԱԿ է, գուցե, ոչ ծաղկամանի համար, բայց գոյություն ունենալու իրավունքով և մեզ հաստատ սիրում է այդ թանկ զգացմունքի իր ընկալման չափով:

<-Աղջի՛կս, հիվանդին բուժում են ոչ թե խղճալով, այլ ցավ պատճառելով: Դու ու քույրդ, որն առավել "մայրահպատակ" է, աշխատեք հենց սա հասկացնել նրան, ԱՆԳԱՄ, սպառնալով ՀԱՐԿԱԴԻՐ ԲՈՒԺՄԱՄԲ: Համոզված եմ՝ դա կազդի նրա վրա: Նա հատկապես քո կարծիքի հետ հաշվի է նստում, քանզի շատից-քչից նա լոկ քեզ է սիրում:

-Բալի՛կս, ականջիդ օղ արա… ամուսնացող կինը, անկախ ժամանակակից ստապատիր դեմոկրատիկ քարոզների, որ նա իբր իրավահավասար անձ է, եթե ուզում է <u>ցանկալի</u> ու <u>պահանջված</u> լինել, կոպիտ ասած, պետք է նմանվի ԸՆՏԱՆԻ ԿԵՆԴԱՆՈՒ, ասել է՝ ՈՒՆԱԿ ԼԻՆԻ ԸՆՏԵԼԱՆԱԼ այն նոր միջավայրին, ուր ԿԱՄՈՎԻՆ (հիշիր եկեղեցում հարսից պահանջով "ՀՆԱԶԱՆԴ" եմ երդումը, որի մեջ շատ խորը իմաստ կա) հայտնվել է, արդեն ՑՄԱՀ ապրելու նպատակով… նա հատկապես պետք է խորշի ԿԱՄՔ ԹԵԼԱԴՐԵԼՈՒՑ և ընդհակառակը, այնքան ՀՄԱՅԻՉ ու ԽԵԼԱՅԻ լինի, որ ՀԱՇՎԻ նստեն իր կարծիքի հետ: Աստվածային այս կանոններին չենթարկվողների տեղը՝ ԶՈՒՆԳԼԻՆ է…

-Շնորհակալություն տա՛տ ջան… ինչպես Յուլիոս Ֆուչիին է գնահատել իր կյանքի անդավ ընկերուհի Գուստինային…դու էլ ինձ համար եղար "իմ թե ԱՌԱՋԻՆ ճիշտ ընթերցողը և թե ճիշտ քննադատը":

-Չարժի, աղջի՛կս: Սա հոգու պարտք էր, որը մի օր պետք է փակվեր… ավել-պակաս կներես, սակայն մի մոռացիր, որ ճշմարտությունը փշոտ է լինում…

-Տա՛տ ջան, նորից ներիր՝ ևս մի ցավոտ հարցիս համար:

-Ասա՛, աղջի՛կս:

-Տա՛տ, վաղուց եմ զգացել, որ բոլորդ մորս չսիրելով հանդերձ՝ կարծես նաև մի ինչ-որ մեծ բանի համար նրան ատում եք, այո՞…

-Ինչպես ինքը բոլորիս, անխտիր, իհարկե՛, հատկապես հորդ, որին նա նաև կներես, դավաճանում է, և հայրդ այդ մասին գիտենալով հանդերձ, դարձյալ հանուն հիվանդ եղբորդ՝ բաժանության չի դիմում: Եղբայրդ՝ ըստ կոնսիլիումի, առանց մայրական կաթի, ձայնի և նրա մարմնի հոտի՝ չի ապրի… Մինչ լույս աշխարհ գալը մանկան ուղեղը ծանր տրավմա է տարել, որի մասին կկարդաս կտակի տեղեկանքում…>

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

Ես գունատվելով վեր կացա տատիս կողքից և իջա հայաթ: Թե արտասվելով հանդերձ որքան "խաղացի" հոսող ջրի հետ, չեմ հիշում… ի վերջո վեր բարձրացա և նորից նստեցի տատիս կողքին… նորից "պարզաջրվելու" կարիք էի զգում… նա ըմբռնողաբար կարծես չնկատելով իմ բացակայությունը՝ շարունակեց.

<Ծնողներիդ հոգեկան ու վստահ եմ՝ նաև ֆիզիկական հավերժ խզման կուլմինացիան եղավ մորդ դիպլոմ ստանալու օրը: Հայրդ ըստ պայմանավորվածության՝ ճիշտ ժամին եկավ տուն շամպայնով ու ծաղիկներով, սակայն մայրդ նույնիսկ դրանից երկու ժամ անց՝ չկա՛ր ու չկա՛ր: Բնականաբար, անհանգստանալով, հայրդ որոշեց գնալ ինստիտուտ, պարզելու՝ ինչն ինչոց է և մեկ ժամ անց, մորդ հարբած և կիսապատռված շորերով՝ տուն բերեց, և, կներես, շպրտելով ննջասենյակ՝ տանից դուրս եկավ …Հորդ ընկերոջ հեռախոսային զանգով պարզվեց, որ նա մորդ ու նաև երկու այլ կանանց, այդ վիճակով բռնացրել էր հեռակա մանկավարժականի ամբիոնի վարիչ, քաղաքով մեկ հայտնի դոն Ժուան Լևոն Սամվելյան կոչեցյալի առանձնասենյակում, որն հաջորդ օրն իսկ, նույնիսկ դեռ հիվանդանոցում (բնականաբար հորդ "շնորհիվ") հեռացվեց աշխատանքից և կուսակցությունից….

Հաջորդ օրն ուշքի գալով, մայրդ, հիվանդ եղբորդ գրկած ու ձեզ լաց ու կոցով իր ետևից գցած, մեր տանից փախավ քեռուդ տուն՝ նրան խաբելով, որ հայրդ է՝ հարբած վիճակով, ձեզ տանից վռնդել…

Երկու օր անց երբ եղբորդ վիճակը շատ էր ծանրացել, նա զանգահարեց ինձ և խնդրեց շտապ օգնություն, ինչն անշուշտ, անմիջապես հորդ ընկերների և պապիկիդ շնորհիվ, բարձր մակարդակով ապահովվեց… սակայն…

Մի խոսքով, հանուն եղբորդ փրկության, այդ խայտառակ ինցիդիենտը ևս երկրորդացվեց և այդ առիթով Մոսկվայից անմիջապես Երևան թռած հորդ անդավ ընկերներ Կիմ Բրասեղյանի, Գարեգին Գևորգյանի (ԿԳԲ-ի "Գարիկի") և հորդ դեռ ուսանողական տարիների սիրոշշուկ ընկերուհի՝ Սոֆա Սարյանի համառ հորդորներով, հայրդ, ի վերջո, զիջեց և ձեզ նորից տուն բերեց… վճռորոշ դեր խաղաց նաև Սոֆայի կողմից ճշմարտության իրազեկումից հետո մորեղբորդ՝ Մառլենի կտրուկ պահանջը քրոջից՝ անհապաղ ազատելու իր բնակարանը…

Ձեզ տուն բերելու հաջորդ օրն իսկ հայրդ, որն արդեն ակադեմիկոս Պարիս Հերունու ինստիտուտում էր աշխատում, իր հաշվին երկամսյա արձակուրդ ձևակերպելով, եղբորդ

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

առած, թռավ Եվպատորիա՝ բուժման, քնզի էն երկուօրյա չարաբաստիկ իրադարձությունների ժաանակ եղբորդ առողջական վիճակը ԿԱՍԿԱԾԵԼԻՈՐԵՆ շատ էր սրվել… Օգտվելով դրանից՝ մայրդ փոխանակ ամոթից գետինը մտնելու, դարձյալ սկսեց երեկոյան ուշ ժամերի տուն գալ: Ես ու պապիկդ ստիպված Մառլեն քեռուդ կանչելով, պահանջեցինք անհապաղ տեղափոխվել ամիսներ առաջ հորդ հատկացված երեք սենյականոց բնակարանը… չնայած դեռ տաս օրը չբոլորած, Ձեր հիստերիկ լացուկոցային պահանջներով նա քեզ և քրոջդ սկսեց ամեն շաբաթ-կիրակի բերել մեր տուն՝ գլխահակ իրազեկելով, որ մայրդ ձեզ սարսափելի ծեծում է և որ ինքը պարաստվում է նրան հոգեբույժի մոտ տանել…>

Տատս այլևս չխոսեց և ինչ-որ պատրվակով գնաց հարևանի տուն, հաստատ ինձ իմ փոթորկահույզ մտքերի հետ մենակ թողնելու նպատակով…

Ողջ էությամբ այնպես էի անզգայնացել, որ կարծես կրկնայի դոզայով նարկոզի տակ լինեի…մտքումս ասում էի՝… երանի ո՛չ էն բուհական քննարկումը եղած լիներ, ո՛չ իմ իմպուլսավորվելը և ո՛չ էլ տատիկիս ասած այս ԱՆՈՄԱԼ իրողություններ բացահայտած ծանր զրույցը…սակա՛յն… սակա՛յն, ներըմբռնողաբար ինձ հասկանալի դարձավ, որ այդ ամենը թերևս ՃԱԿԱՏԱԳՐԱԿԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԷԻՆ…

Պարզ դարձավ նաև, որ կյանքում ամեն ինչ (այդ թվում՝ հայրենիք, ազգ ընտանիք, այլազգիներ…) ԱՐԴԱՐ ՈՒ ԱԶՆԻՎ սիրելու միայն մի չափանիշ կա՝ ՍԻՐԵԼ ԸՍՏ ԱՐԺԱՆՎՈՒՅՆ… Մեկ էլ երկու պայման՝ նախ՝ ինչպե՞ս սիրես՝ ԵՐԲ ՆԵՐԵԼՆ Է ԱՆՀՆԱՐ և հետո այն, որ ՃԻՇՏ ՉԵՆ ՍԻՐՈՒՄ, ԵՐԲ ՍԻՐՈՒՄ ԵՆ ԱՌԱՆՑ ԿՈՐՑՆԵԼՈՒ ՎԱԽԸ ԶԳԱԼՈՒ…

***

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

ԱՂՋԻԿՆԵ՛Ր, ԹԵԹԵՎԱՄԻՏ ՄԻ ՎԵՐԱԲԵՐՎԵՔ

ԷՊԻԼՈԳ-Հեռու՛-հեռուների՛ց ինձ էր հասնում ՏԱՏԻՍ զգաստացնող ձայնը…Աղջիկնե՛ր, թեթևամիտ մի վերաբերվեք “ՃԵՐՄԱԿ ՏԱՆԳՈՅԻՆ”… ձեր հրավերի մեջ փաստորեն ՆԱԽԸՆՏՐԵԼԻՈՒԹՅԱՆ ՄԵՍԻՋ ԿԱ, որը կարող է թե խաբուսիկ հույսեր ներշնչել և թե ավարտվել ձեր հիասթափությամբ:

Հիշե՛ք- Հատկապես պարահրապարակում ընտրելն ու ընտրված լինելը, ինչպես նաև մերժելն ու մերժված լինելը՝ ՉԻ ԿԱՐԵԼԻ ԸՆԿԱԼԵԼ ՈՐՊԵՍ ՃԱԿԱՏԱԳԻՐ:

Վերջ

Երևան

1974-2014թթ.

Հեղինակի հեռախոսի համար՝

010- 63-40-33

Ժամը 20^{00}-ից հետո

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

Այսպիսով

Ո՞ր իմաստալից մտահանգումներն են հիշարժան ըստ համապատասխան էջերի

- Երեխաների արտաքին գեղեցկությունը զգալիորեն պայմանավորված է նաև նրանով, թե իրենց արարման պահին (սեռական ակտի ողջ ընթացքում) նրանց ծնողները, ինչպիսի ՓՈԽՀԱՃՈՒՅՔՈՎ են տրվում միմյանց և ՓՈԽԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆ պատճառում մեկ-մեկու… <Խոնջանքն ու գոհունակության ժպիտն են ապագա մանկան գեղեցկության ու առողջության նախապայմանները… և, ցավոք, հակառակը, երբ ի՜նչ-ի՜նչ ՎԱՆՈՂ պատճառներով՝ կամ խախտվում, կամ թուլանում է զույգերի ԼԻԲԻԴՈ ՁԳՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ փոխկանչը>… էջ-5
- Ուրեմն՝ ծնողներիցս որևէ մեկը (կամ երկուսը միասին) խախտել էր (էին) փոխհաճելիության այդ կանոնը՝ ՄԱՐԴԱՐԱՐՈՒՄԸ ՎԵՐԱԾԵԼՈՎ ԲՆԱԶԴԱՅԻՆ ՍԵՌԱԿԱՆ ԱԿՏԻ…էջ-6
- Մայր և որդի չեն կարող միմյանց ԱՆԱՁԱՌ սիրել (իմա “օբյեկտիվ”), ինչպես տխմարաբար պնդում են մարքս-լենինյան “փուչ” գաղափարախոսները՝ սերն ընդհանրապես ՍՈՒԲՅԵԿՏԻՎ հասկացողություն է: -էջ-7
- <Կարգին գրողի ձեռքում գրիչը ոչ թե գործիք է, այլ նրա օրգանը> Ֆրանց Կաֆկա… էջ-8
- Մարդուն ժամանակ է պետք համոզվելու՝ իր երջանիկ կամ դժբախտ լինել-չլինելու մեջ, որի դեպքում, ավա՜ղ, երբեմն վճռորոշ են դառնում ճակատագրով տնօրինվող պատահականությունները:-էջ-11
- Երբ ինչ-որ շարժումով փորձեցի շրջանցել նրա բուրող մարմինը ու հանկարծ … (կարծում եմ՝ ոչ պատահաբար)… ձեռքս քսվեց նրա արդեն հևացող կրծքին, անմիջապես միմյանց աչքերի մեջ նայելով (դա բնատուր ռեֆլեքս է), զգացինք, որ ինչ-որ լիբիդո լիցքեր անցան մեր մարմիններով և կպան ճիշտ նշանակետերին… և ես, որձի մի հին կարոտով, նրա մեջքը ամուր գրկելով՝ մղվեցի պարելու>… էջ-14
- Աստծո կողմից մարդուն տրված կյանքը՝ ՄԻԱՆԳԱՄՅԱ օգտագործման համար է (անկախ ԹԵԻՍ կամ ԱԹԵԻՍ լինելուց…) և այն իր կապիտալն է՝ ոնց կուզի, կծախսի, ցավոք, ընդհուպ՝ ինքնասպանություն: էջ-15
- Ձեր մայրը, բացի ձեզ իր ԱՆԻԾՎԱԾ ԱՐԳԱՆԴՈՒՄ ինը ամիս կրելուց, ձեր հանդեպ ուրիշ այլ “վաստակ” չունի, եթե այդ Աստվածատուրությունը, իհարկե՛, կարելի է այսպես անվանել: էջ -17
- -Բալի՛կս, ականջիդ օղ արա… ամուսնացող կինը, անկախ ժամանակակից ստապատիր դեմոկրատիկ քարոզների, որ նա իբր իրավահավասար անձ է, եթե

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

ուզում է ՑԱՆԿԱԼԻ ու ՊԱՀԱՆՋՎԱԾ լինել, կոպիտ ասած, պետք է նմանվի ԸՆՏԱՆԻ ԿԵՆԴԱՆՈՒ, ասել է՝ ՈՒՆԱԿ ԼԻՆԵԼՈՒ ԸՆՏԵԼԱՆԱԼ այն նոր միջավայրին, ուր ԿԱՄՈՎԻՆ հայտնվել է, արդեն ՑՄԱՀ ապրելու երդմամբ… Հիշիր, եկեղեցում հարսից պահանջվող “ՀՆԱՁԱՆԴ” եմ երդմնաբառը…այն խախտողի տեղը ՋՈՒՆԳԼԻՆ Է…էջ-18

- Արդար ու ազնիվ սիրելու միակ չափանիշը՝ ԸՍՏ ԱՐԺԱՆՎՈՒՅՆ սիրելն է… Մեկ էլ … ինչպե՞ս սիրել… ԵՐԲ ՆԵՐԵԼՆ Է ԱՆՀՆԱՐ և՝ ճիշտ չեն սիրում, երբ սիրում են ԱՌԱՆՑ ԿՈՐՑՆԵԼՈՒ ՎԱԽԸ ՁԳԱԼՈՒ… էջ 20-21
- Հատկապես պարահրապարակում ընտրելն ու ընտրված լինելը չի կարելի ընկալել ՈՐՊԵՍ ՃԱԿԱՏԱԳԻՐ… Աղջիկնե՛ր, ճիշտ պարեք “Ճերամկ տանգոն” … Ճերմակը շուտ է թառամում: էջ-21

2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com